ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ, ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-1»

ք.Երևան «23» 04 2020 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍԵԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Սեփոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում՝ Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց սահմանվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման հանգամանք է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով ամրակնքված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման թույլատրելի դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում՝ սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) գործողությունները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դրդմամբ պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Հետևաբար, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	**<<ՍԵԳ>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17	Հասցե՝ ք. Երևան, Կուրղինյան նրբ. 6 շենք 32 բն.
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ 1570032180290100
ՀՎՀՀ՝ 02583241	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00878823
Տնօրեն՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Վ. Սեփոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«23» 07 2020 թ. [illegible]
ԳԴ-ԳՀԾՁԲ-20/02-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	Մատուցվող ծառայության առավելագույն միավորի գին	ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար	ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գին	Կնքվելիք պայմանագրի ընդհանուր /առավելագույն/ գինը	չափման միավորը	ընդհանուր քանակը	մատուցման: հասցեն	մատուցման: ժամկետը**
1	50311120/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	Համաձայն կից ներկայացված ցանկ 1-ի		2 500 000	350 000	2 500 000	դրամ	1	ք. Երևան	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 20-ը:

*Ցանկ 1-ը հանդիսանում է սույն հավելվածի անբաժանելի մասը:

Այլ պայմաններ.

1. Այն մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման, պետք է փոխարինվեն նորով, որոնք պետք է լինեն չօգտագործված և որոնց համար պետք է տրվի առնվազն 6 ամիս երաշխիքային ժամկետ:

2. Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում՝ Պատվիրատուի կողմից նշված հասցեում: Այն դեպքում, երբ Պատվիրատուի նշած հասցեում հնարավոր չէ պատշաճ կերպով իրականացնել սպասարկումը, Պատվիրատուի համաձայնությամբ վերանորոգման ենթակա սարքը կարող է տեղափոխվել Կատարողի արհեստանոց:

**3. Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի կողմից համապատասխան հայտ ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց մասերի փոխարինման ծառայությունների դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասերի փոխարինումով ծառայությունների դեպքում: Առանձին դեպքերում, երբ փոխարինվող մասերը տվյալ պահին առկա չեն՝ Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:*

4. Յուրաքանչյուր սարքի սպասարկման և նորոգման համար՝ Պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և Պատվիրատուին է ներկայացվում նախնական գնման և գնահատման ակտ:

2. Ծառայության մատուցման գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

**Պատվիրատուի կողմից առաջին հայտը ստանալուց հետո հայտով նախատեսված ծառայությունները մատուցվում են 20 օրացուցային օրվա ընթացքում: Մնացած բոլոր դեպքերում գործում է սույն մասի 3 կետը:*

***Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՍԵԳ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կուրղինյան նրբ. 6
շենք 32 բն.
Հ/Հ 1570032180290100
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 00878823

Տնօրեն՝ Վ. Սեփոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«23» 04 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	875 000	875 000	875 000	1 500 000	1 500 000	1 500 000	2 500 000	2 500 000	2 500 000	2 500 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն)

Մ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՍԵԳ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կուրղինյան նրբ. 6
շենք 32 բն.
Հ/Հ 1570032180290100
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 00878823

Տնօրեն՝ Վ. Սեփոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2020 թ. կնքված
ԴԴ-ԳՀԾՁԲ-20/02-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____.
պայմանագրի գնման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

	Ցանկ 1	
Հ/հ	**Համակարգիչների, մոնիտորների և ԱՍՍ-երի տեխնիկական բնութագրերի և սպասարկման ծառայությունների անվանումները** **HPdx7400/dx6120MT/dx2200/de5700/Compaq dc5800/ կամ համարժեք համակարգիչների**	**ՀՀ դրամ**
1	Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում)	3000
2	Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows XP,7,8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus, Antivirus) Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop,COREL DRAW,PROMT, LINGVO), Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում (AUTOCAD, ARCHICAD), Վիրուսներից վնասված համակարգչի աշխատունակության վերականգնում, վիրուսազերծում, հակավիրուսի տեղադրում	5000
3	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը LGA 478/775/1050/1150/1155/B75/1155 կամ համարժեքը	4500
4	Մայրական տպասալի նորոգում ներառյալ պահեստամասերը	6000
5	Մայրական տպասալի փոխարինում ներառյալ LGA 478/775/945/G31/G41/H61/H81/H110/ 1150/1155/B75/1156 տպասալը, կամ համարժեքը	30000
6	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 478 2GHz, 3.0GHz, LGA 775 3.0GHz, 3.2GHz. Core 2 Duo E7300, Core 2 Duo E7400,Core 2 Duo E7500, Coer 2 Duo E8300, Coer 2 Duo E8500, Core 2 Quad Q9500	15000
7	CPU փոխարինում ներառյալ ինտել Core i3/i5/i7 համապատասխան պրոցեսորով	30000
8	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՀՑ (DDR2 1GB 667/800MHZ)	5000
9	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՀՑ (DDR2 2GB 667/800MHZ)	8500
10	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1066/1333ՀՑ (DDR3 2GB 1066/1333MHZ)	9000
11	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մ 1066/1333ՀՑ (DDR3 4GB 1066/1333MHZ)	12000
12	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8192Մ 1066/1333ՀՑ(DDR3 8GB 1066/1333MHZ)	19000
13	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4096Մ 2400ՀՑ(DDR4 4GB 2400MHZ)	16000
14	Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8192Մ 2400ՀՑ(DDR4 8GB 2400MHZ)	21000
15	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊԻԻԻԱյ-էքսպ(nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp 128bit) կամ համարժեք	30000
16	HDD փոխարինում ներառյալ HDD 1ՏԲ,7200ռպմ, SATA3	26000
17	HDD փոխարինում ներառյալ HDD 2ՏԲ,7200ռպմ, SATA3	35000
18	CD-RW/DVD-RW-ի փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(CD-RW/DVD-RW),կամ համարժեք	7500
19	Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով	4000
20	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm, 450W) ներառյալ սնուցման բլոկը	7500
21	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 550W) ներառյալ սնուցման բլոկը	9000
22	Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 650W) ներառյալ սնուցման բլոկը	12500
23	Ցանցային քարտի տեղադրում PCI կամ PCI-e 10/100/1000 Mbps ներառյալ ցանցային քարտը, Lan Card PCI կամ PCI-e	7000
	HP ML 330G7/ML 330G6/Supermikro SYS-5038A/DELL Optil Plex TM745 Mini / կամ համարժեք սերվերների	
1	Պրոֆիլակտիկա , դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում)	4000
2	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	4500
3	Մայրական տպասալի նորոգում ներառյալ պահեստամասերը	7000
4	Մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	60000

5	Ինֆորմացիայի վերականգնում	15000
6	RAID-ի վերականգնում	10000
7	Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով	9500
8	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	25000
	Մոնիտորի	
1	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	10000
2	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19"-20" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	16000
3	Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-23" (մատրիցա, լամպ, ինվերտոր, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	23000
	Անխափան սնուցման սարք	
1	Վերանորոգում (ներառյալ վնասված պահեստամասերը, տպասալ, տռանզիստոր, միկրոսխեմա, տռանսֆորմատոր և այլ պահեստամասեր)	9000
2	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/4,5Ա	8000
3	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա	10000
4	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա	13000
5	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/12Ա	15500
6	Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/18Ա	24500
	Ընդհանուր	586500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1, 17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլ

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՍԵԳ>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կուրղինյան նրբ. 6
շենք 32 բն.
Հ/Հ 1570032180290100
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 00878823

Տնօրեն՝ Վ. Սեփոյան

(ստորագրություն)

Կ.Տ.